



«Իրազեկ Քաղաքացիների Միավորում» Խորհրդատվական ՀԿ  
“Union of Informed Citizens” consulting NGO

Ք. Երևան 0038, Աբելյան փող. 6/1, սենյակ 316Ա  
+374 (0) 11 355042,

6/1 Abelyan str., room 316A, Yerevan 0038  
[UICArmenia.org](http://UICArmenia.org), [uicarmenia@gmail.com](mailto:uicarmenia@gmail.com)

Ելից` No. 510

ՀՀ Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովին

## Դիմում

Հանձնաժողովի հարգելի անդամներ,

Ձեզ է ներկայացվում 2015 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի ժամանակ տարբեր անձանց կողմից արձանագրված իրավախախտումների ցանկը և դրանց մեծ մասն ապացուցող տեսանյութերի հղումները:

Հիմք ընդունելով «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 11-րդ, 16-րդ և 21-րդ հոդվածները, ՀՀ Ընտրական Օրենսգրքի, 26-րդ 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածները, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածը, խնդրում ենք հարուցել վարչական վարույթ, դրա սահմաններում ուսումնասիրել ներկայացված բոլոր թվով 272 իրավախախտումները և`

1. Իրավասու իրավապահ մարմիններին ուղարկել բոլոր այն իրավախախտումների մասին տեղեկությունները, որոնք պարունակում են կամ կարող են պարունակել հանցակազմ,
2. Արձանագրել վարչական իրավախախտումը և վարչական պատասխանատվության ենթարելու պահանջով դիմել ՀՀ Վարչական Դատարան բոլոր այն իրավախախտումների մասով, որոնցում առկա են ՀՀ Վարչական Իրավախախտումների Վերաբերյալ Օրենսգրքի 40.1-ից 40.12 հոդվածներով նախատեսված զանցանքներ,
3. Ընտրական Օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում քարոզչություն կատարելու իրավունք ունեցող անձի հիմնադրամի ծախսերում չներառված ծախսերի եռապատիկի չափով նշված անձից պետական բյուջե գումար փոխանցելու մասին որոշում կայացնել,

4. Գնահատել ինչպես այդ իրավախախտումներից յուրաքանչյուրի, այնպես էլ դրանց համակցության ազդեցությունը հանրաքվեի արդյունքների վրա:

Կից՝

1. Իրավախախտումների հաղորդումների ցանկ՝ 21 թերթ,
2. Անանուն քարոզչանյութի լուսանկարներ՝ 2 թերթ,
3. Լիազորագիր՝ 1 թերթ:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանք,

Ծրագրերի համակարգող,  
Դանիել Բոաննիսյան  
11-ը դեկտեմբերի 2015թ.